Մրցույթի հայտարարություն

ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցի

տնօրենի թափուր տեղը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության նշանակման>> կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն, ՀՀ Արագածոտնի մարզի Քուչակի,Եղիպատրուշի և Ծաղկաշենի միջնակարգ դպրոցների միացյալ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1.Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը
2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր)

2.Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1) Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով
2) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը
3) Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի պատճենը)
4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակով
5) Ինքնակենսագրություն

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Քուչակի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցում 2021թ. նոյեմբերի 2–ից մինչև նոյեմբերի 22–ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9^{00}-ից մինչև 15^{00}-ը, բացի հանգստյան (շաբաթ և կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թ. դեկտեմբերի 6-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ Արագածոտնի մարզի << Քուչակի Մ. Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ –ում:

Հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Քուչակ, 11 փողոց , շ.14:

Տեղեկությունների համար դիմել՝ Ն. Եսայանին հեռ. 098832023, էլ. հասցե՝ quchak@schools.am